IMEX GROUP
Co. LTD

ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 163-րդ կետի

Համաձայն «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կորպորատիվ պարտատոմսերի Ազդագրի՝ պարտատոմսերի սեփականատերերին տրվել էր պարտատոմսերի վաղաժամկետ մարման իրավունք: Պարտատոմսերի վաղաժամկետ մարման օր է համարվում պարտատոմսերի տեղաբաշխման օրվան հաջորդող 12-րդ ամսվա համապատասխան օրը՝ 2009թ. հոկտեմբերի 13-ը: Վաղաժամկետ մարման իրավունքից օգտվելու համար պարտատոմսերի սեփականատերերը թողարկման պայմաններին համաձայն սույն թվականի սեպտեմբերի 15-ից տեղաբաշխողին՝ Ամերիաբանկ են ներկայացրել վաղաժամկետ մարման հայտեր:

2009 թվականի սեպտեմբերի 25-ին ժամը 16:00-ին ավարտվել է վաղաժամկետ մարման հայտերի ընդունման գործընթացը: Հայտերի վերլուծության արդյունքում հայտարարում ենք, որ ստացվել է **19** վաղաժամկետ մարման հայտ՝ ընդհանուր **890,480,000 դրամ անվանական արժեքով**: Տվյալները հաղորդել են Ամերիաբանկից, իսկ վաղաժամկետ մարման հայտերն արխիվացված են Ամերիաբանկում:

Վաղաժամկետ մարման ներկայացված պարտատոմսերը կմարվեն 2009 թվականի հոկտեմբերի 13-ին:

Ռաֆայել Մանուչարյան	**Տնօրեն**		***30.09.2009թ.***
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)